Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Վայոց ձորի մարզի կրթության համակարգի 2011-2012 ուսումնական տարվա արդյունքների և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրների մասին

Եղեգնաձոր 24-ը օգոստոսի 2012թ

Հարգարժան պարոն մարզպետ, հարգարժան պարոն Մկրտչյան, հարգելի հյուրեր, գործընկերներ.

Մանկավարժների օգոստոսյան ամենամյա յուրաքանչյուր խորհրդակցություն մի նոր հնարավորություն է ընձեռում ամփոփելու նախորդ ուսումնական տարվա արդյունքները, նախանշելու մեկնարկող ուսումնական տարվա խնդիրները:

Մարզում գործում է 51 հանրակրթական դպրոց, այդ թվում 1 տարրական, 15 հիմնական և 35 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան, 3-ը ավագ դպրոց ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Մարզային ենթակայությամբ գործող 48 դպրոցներում սովորում է 6132 աշակերտ, որոնք կոմպլեկտավորված են 464 դասարաններում: Իսկ մարզի 3 ավագ դպրոցներում սովորում է 1074 աշակերտ /Եղեգնաձորի ավագ դպրոց - 420, Վայքի ավագ դպրոց – 250, Ջերմուկի ավագ դպրոց – 404/: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 55 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2 և Վայքի հիմնական դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Համայնքների ղեկավարների, մարզի վիճակագրական ծառայության և ԶԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով իրականացվել է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, ինչի արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզային ենթակայության 48 դպրոցներում աշխատում են 1011 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն կրթություն (84%-ը), մնացած 160-ը՝ միջնակարգ մասնագիտական:

ՈՒսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1 : 6

Դասարանի միջին խտությունը 13,5 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17,1 ժամ:

Բոլոր դպրոցներն ունեն համակարգիչներ, իսկ 19 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ, որոնք օգտվում են ինտերնետ կապից: Համակարգիչներով դպրոցները շարունակվում են համալրվել: Շարունակվում է նաև ինտերնետ կապով դպրոցներն ապահովելու ծրագիրը:

Տարբեր առարկաների գծով նախորդ ուստարում վերապատրաստվել և ատեստավորվել են 128 ուսուցիչներ: Ներկայումս վերապատրաստվում են 190 ուսուցիչներ:

Տարվա ընթացքում դպրոցի կառավարման իրավուքի ձեռքբերման նպատակով անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որից հետո սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների կազմակերպվել է գործադիր տնօրենի պաշտոնի համար մրցույթներ: 35 դպրոցներում ընտրվել են տնօրեններ, իսկ 4 դպրոցներում /Արենիի միջն, Ջերմուկի N3, Մոզրովի հիմնական, Փոռի տարրական/ պարբերաբար հայտարարված մրցույթներում տնօրեններ չեն ընտրվել հավակնորդ չլինելու պատճառով: Մնացած 9 դպրոցներում տնօրենները ընտրվել են: Այդ դպրոցներում տնօրենի պաշտոնի մրցույթ կկազմակերպվի նրանց աշխատանքային պայմանագրի ժամկետե լրանալուց հետո:

Ապահովված է դպրոցական շենքերի պահպանությունը: 2012թ. վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մարզի 3 դպրոցներում /Քարագլուխ, Խաչիկ, Արենի/, որոնք կավարտվեն մինչև սեպտեմբերի 1-ը:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, արդեն սկսվել է դասագրքերի նոր խմբաքանակների ստացումը, որը սեպտեմբերի 1-ին կհասնի դպրոց:

Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են շուրջ 780 աշակերտ, որոնցից 29-ը մասնակցել են հանրապետական փուլին: Նրանցից 7-ը պարգևատրվել են գովասանագրերով և դիպլոմներով:

Մարզի 2 շրջանավարտներ՝ Ռինդի միջն. դպրոցից Փառանձեմ Սարգսյանը և Շատինի միջն. դպրոցից Արման Նիկողոսյանը, միջնակարգն ավարտեցին գերազանցության մեդալով:

Աշխատանքներ են տարվում դպրոցական գույքը թարմացնելու, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:

Մարզում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր միջնակարգ դպրոցներն ապահովված են զինվորական կաբինետներով և ուսումնական զենքով: Մարզի դպրոցների և մարզում տեղակայված զինվորական կորպուսի միջև ստեղծվել է սերտ համագործակցության մթնոլորտ: Տարվա ընթացքում կազմակերպվում է հրաձգություն մարտական զենքից, որտեղ մեր աշակերտները ցուցաբերում են լավագույն արդյունքներ:

Հուլիսի 1-ից օգոստոսի 8-ը մարզի սոցիալապես անապահով և ծնողազուրկ 140 երեխաներ 2 փուլով իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի <Հասմիկ> ճամբարում:

Մարզում գործում է համայնքային ենթակայության 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 805 երեխաներ:

Մարզի 22 համայնքներում բացվել են նախակրթարաններ, որոնցում ընդգրկվել են 4-5 տարեկան 482 երեխաներ 22 խմբով: Այս տարի նախատեսվում է բացել նախակրթարան ևս 4 համայնքներում:

Լրացել է մարզի հանրակրթական հաստատությունների կառավարման խորհուրդների լիազորությունների ժամկետը: Սեպտեմբերին սահմանված կարգով կանցկացվի կառավարման նոր խորհուրդների ձևավորումը:

Հիմնախնդիրներ

1. Աշակերտների թվի պակասելու պատճառով թերկոմպլեկտավորված դասարաններում կրթության ոչ լիարժեք կազմակերպելու մասին:
2. Մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, ինչի հետևանքով այդ համայնքներում անլուծելի է մնում նախադպրոցական կրթության, որպես միջնակարգ կրթության նախապատրաստման կարևորագույն օղակի, խնդիրը:
3. Հիմնական դպրոցն ավարտելուց հետո ավագ դպրոցում աշակերտների ուսումը շարունակելու դժվարությունների մասին:
4. ՈՒսուցիչների վերապատրաստումների ամռանը կազմակերպելու նպատակահարմարության մասին:
5. ՈՒսուցիչների վերապատրաստումները տարեկան ըստ առարկաների կազմակերպելու կամ ավելի օպտիմալ տարբերակ ընտրելու մասին:

6. Դպրոցների ֆինանսավորման գործող կարգի վերանայում:
7. Հիմնական դպրոցներում ուսումնական թերծանրաբեռնվածության հետևանքով ուսուցիչների հնարավոր կրճատումների մասին:
8. Կենսաթոշակային տարիքի ուսուցիչների աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին:
9. Մարզի 3 քաղաքներում ստեղծված ավագ դպրոցների տեղակայման հարցի վերանայում նկատի ունենալով տեղական առանձնահատկությունները և աշակերտների տեղափոխման ավելի արդյունավետ տարբերակի ընտրության անհրաժեշտությունը:

Հարգելի գործընկերներ, շնորհավորում եմ ձեզ և ի դեմս ձեզ՝ մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվներին, նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, մաղթում եմ արդյունավետ աշխատանք: Համոզված եմ որ Վայոց ձորի մարզի կրթության բնագավառի աշխատողները բարձր պատասխանատվությամբ կկատարեն կրթական հաստատությունների առջև դրված խնդիրները և արժանապատվորեն կկրեն մանկավարժի պատվաբեր կոչումը :

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի

կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Ա. Ղազարյան